«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հուլիսի, 2023 թվական, N 5_L

«Ե Ր Ե Վ Ա Ն Ի Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն » Հ Ի Մ Ն Ա Դ Ր Ա Մ Ի Ի Ջ Ե Վ Ա Ն Ի Մ Ա Ս Ն Ա Ճ Յ Ո Ւ Ղ Ի Ն Ո Ր Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ա Մ Բ Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ա Ն Հ Ա Ս Տ Ա Տ Մ Ա Ն Վ Ե Ր Ա Բ Ե Ր Յ Ա Լ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 9-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը *որոշում է.*

1. հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի նոր խմբագրությամբ կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ **Ս. Պապիկյան**

2023 թ.հուլիս «24»

Երևան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(նոր խմբագրությամբ)
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) Իջևանի մասնաճյուղը (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ կամ մասնաճյուղ) ԵՊՀ առանձնացված ստորաբաժանում է, որի գործունեությունը նպատակաուղղված է տարածաշրջանում բարձրագույն և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կրթական մակարդակներում ու կրթական ծրագրերի միջոցով հայագիտական, բնագիտական, սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար գիտությունների և տեխնիկայի, մշակույթի տարբեր ուղղություններով կրթության, հիմնարար, կիրառական ու նորարար գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը:

2. ԵՊՀ ԻՄ-ը «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության Իջևանի մասնաճյուղի (պետական գրանցման համարը՝ 01Բ.000.135) իրավահաջորդն է (փոխանցման ակտին համապատասխան):

3. ԵՊՀ ԻՄ-ն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, կրթության, գիտության ոլորտները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի և սույն կանոնադրություններին համապատասխան:

4. ԵՊՀ ԻՄ հիմնադիրը «Երևանի պետական համալսարան» հիմնադրամն է (այսուհետ՝ ԵՊՀ կամ Հիմնադիր):

5. ԵՊՀ ԻՄ անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ,

2) հայերեն կրճատ՝ «ԵՊՀ ԻՄ»,

3) ռուսերեն լրիվ՝ Иджеванский филиал фонда ‹‹Ереванский государственный университет››,

4) ռուսերեն կրճատ՝ «ЕГУ ИФ»,

5) անգլերեն լրիվ՝ Ijevan branch of «Yerevan State University» foundation,

6) անգլերեն կրճատ՝ «YSU IB»:

6. ԵՊՀ ԻՄ գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, ք. Իջևան, 4001, Ուսանողական 3:

2. ԵՊՀ ԻՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

7. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը Երևանի պետական համալսարանի առանձնացված ստորաբաժանում է:

8. ԵՊՀ ԻՄ-ն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով՝ Հիմնադրի թույլտվությամբ, բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության բանկերում Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով:

9. ԵՊՀ ԻՄ գործունեության ընթացքում ստացված ամբողջ շահույթը պետք է օգտագործվի նրա կանոնադրական նպատակների իրականացման համար:

10. ԵՊՀ ԻՄ-ն իր կանոնադրությանը համապատասխան՝

1) օգտագործում է Հայաստանի Հանրապետության կառավարության և Հիմնադրի կողմից ԵՊՀ ԻՄ-ին տրամադրված գույքը,

2) սահմանված կարգի համաձայն տնօրինում, օգտագործում և տիրապետում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

11. ԵՊՀ ԻՄ-ը կարող է ունենալ իր անվանումը պարունակող Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կլոր կնիք, դրոշմներ, ձևաթղթեր, ինչպես նաև անհատականացման այլ միջոցներ:

3. ԵՊՀ ԻՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

12. ԵՊՀ ԻՄ գործունեության նպատակն է՝

1) անձի մտավոր, հոգևոր և բարոյական զարգացման պահանջմունքների բավարարումը՝ բարձրագույն կրթություն ստանալու միջոցով,

2) գիտության տարբեր բնագավառներում գիտական, ուսումնամեթոդական, նորարարական և ակադեմիական հետազոտությունների իրականացումը,

3) գիտության, կրթության, տնտեսության և արվեստի զարգացումը՝ ակադեմիական աշխատողների ու սովորողների գիտական հետազոտությունների և ստեղծագործական գործունեության միջոցով, ստացված արդյունքների օգտագործումը տնտեսության մեջ, հետազոտական և կրթական գործընթացում,

4) բարձրագույն կրթությամբ ակադեմիական աշխատողների պատրաստումը և վերապատրաստումը,

5) կրթության որակի ապահովումը և շարունակական բարելավումը,

6) աշխատաշուկայի պահանջների հիման վրա ուսուցման բովանդակության կատարելագործումը, մասնագիտությունների ու մասնագիտացումների համակարգերի մշակումը և արմատավորումը,

7) կրթական գործընթացի անընդհատության, թափանցիկության և հրապարակայնության ապահովումը,

8) սովորողին ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով դաստիարակելը,

9) հասարակության շրջանում գիտելիքների տարածումը, նրա կրթական և մշակութային մակարդակի բարձրացումը,

10) սովորողների մեջ քաղաքացիական դիրքորոշման, հմտությունների և աշխատանքի նկատմամբ պատասխանատվության արմատավորումը ժողովրդավարական ու քաղաքացիական հասարակության կառավարման պայմաններում,

11) սովորողների ու աշխատողների առողջության պահպանման, կենցաղի, սննդի, հանգստի, ֆիզիկական և հոգևոր զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

13. ԵՊՀ ԻՄ-ն իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրավունք ունի՝

1) իրականացնել բարձրագույն, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ մակարդակների կրթական ծրագրեր, այդ թվում՝ լրացուցիչ,

2) Հիմնադրի հետ միասին, ինչպես նաև շահակիցների (այդ թվում՝ գործատուների) ներգրավմամբ մշակել և հաստատել բարձրագույն կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը, հրատարակելու

ուսումնական գրականություն և ուսումնամեթոդական ձեռնարկներ,

3) Հիմնադրի համաձայնությամբ որոշել ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթական տեխնոլոգիաների և սովորողների ընթացիկ ատեստավորման ձևերի, կարգի ու պարբերականության ընտրության հարցերը,

4) ըստ կրթական ծրագրերի՝ կազմակերպել դիմորդների, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունը և ուսումնական գործընթացը,

5) կազմակերպել ակադեմիական, գիտական ու վարչական կազմի մասնագիտական զարգացմանն ուղղված գործողություններ (դասընթացներ, վերապատրաստումներ, ատեստավորում),

6) Հիմնադրի որոշմամբ հաստատել իր կառուցվածքը, կառուցվածքային ստորաբաժանումների կառավարման կարգը, օրենքով սահմանված կարգով ստեղծել, վերակազմակերպել և լուծարել կառուցվածքային ստորաբաժանումներ,

7) Հիմնադրի հաստատմանը ներկայացնել բոլոր տարակարգերի աշխատողների հաստիքացուցակը, իրականացնել աշխատողների ընտրությունը, նշանակումը, բաշխումը և ատեստավորումը,

8) հաստատել ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների պաշտոնների զբաղեցման կարգերը,

9) գիտական ու հետազոտական աշխատանքներում, այդ թվում՝ դրամաշնորհային ծրագրերում, ներգրավել ԵՊՀ ԻՄ սովորողներին,

10) իրականացնել հրատարակչական, տպագրական գործունեություն,

11) առանց Հիմնադրի որոշման՝ բացառել Հիմնադրի կողմից ԵՊՀ ԻՄ օգտագործմանը հանձնված գույքի, այդ թվում՝ շենքերի, շինությունների և հողատարածքների գրավադրումը, օտարումը կամ անհատույց օգտագործման հանձնումը,

12) իրեն օգտագործման իրավունքով տրամադրված գույքը հանձնել վարձակալության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

13) ապահովել մատչելի միջավայր խելամիտ հարմարեցումներով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար՝ մյուսների հետ հավասար հիմունքներով կրթությունը կազմակերպելու նպատակով,

14) Հիմնադրի համաձայնությամբ կնքել հուշագրեր, պայմանագրեր ու համաձայնագրեր Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա համալսարանների, գիտական կազմակերպությունների, պետական մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ,

15) իրականացնել գիտական, գիտատեխնիկական և նորարարական գործունեություն, ինչպես նաև Հիմնադրի հետ համաձայնեցված աշխատանքներ իրականացնել ստացված արդյունքների առևտրայնացման և միջազգայնացման ուղղությամբ,

16) Հիմնադրի համաձայնությամբ կառավարել իր ֆինանսները, որոշել իր ֆինանսական միջոցների օգտագործման ուղղությունները՝ ներառյալ իր աշխատողների վարձատրության և նյութական խրախուսման կարգը և չափերը, սահմանել կրթաթոշակներ,

17) իրականացնել օրենքով և սույն կանոնադրությամբ չարգելված այլ գործունեություն:

14. Արգելվում է ԵՊՀ ԻՄ-ում հասարակական-քաղաքական, հասարակական և կրոնական կազմակերպությունների, դրանց կազմակերպական կառույցների ստեղծումն ու գործունեությունը՝ բացառությամբ արհեստակցական, մասնագիտական, մշակութային, մարզական և շրջանավարտների կազմակերպությունների ու միությունների:

4. ԵՊՀ ԻՄ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

15. ԵՊՀ ԻՄ-ը կարող է անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

1) բարձրագույն և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կրթական ծրագրերով, այդ թվում՝ լրացուցիչ կրթության կազմակերպում,

2) կիրառական արվեստի բնագավառում կրթական գործունեության իրականացում և արդյունքների առևտրայնացում,

3) դիմորդների նախապատրաստական կրթության կազմակերպում,

4) մասնագետների պատրաստում, վերապատրաստում, որակավորման բարձրացում,

5) գիտահետազոտական, գիտաարտադրական, գիտատեխնիկական և նորարարական աշխատանքների իրականացում, դրանց արդյունքների առևտրայնացում,

6) խորհրդատվական, փորձագիտական ծառայությունների մատուցում,

7) հրատարակչական, տպագրական գործունեության ծավալում, դրա արդյունքների իրացում, գրքերի և այլ տպագրական նյութերի վաճառքի իրականացում,

8) իր կողմից հրատարակվող տպագիր և էլեկտրոնային միջոցներով գովազդի իրա-կանացում,

9) կրթական և ուսումնական վճարովի դասընթացների կազմակերպում,

10) միջազգային ուսումնական և գիտատեխնիկական ծրագրերի իրականացում,

11) աշխատողների, սովորողների և այլ անձանց հանրային սննդի, հանգստի, բուժման, կենցաղի կազմակերպում ու սպասարկում:

5. ԵՊՀ ԻՄ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

16. ԵՊՀ ԻՄ շահառուները կրթական, գիտական, մշակութային, գիտաարտադրական և սույն կանոնադրությամբ նախատեսված բնագավառներին առնչվող ֆիզիկական ու իրավաբանական անձինք են:

6. ԵՊՀ ԻՄ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17. ԵՊՀ ԻՄ-ը պարտավոր է՝

1) գործել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին, ինչպես նաև ԵՊՀ և իր կանոնադրությանը համապատասխան,

2) հրապարակել իր գործունեության մասին ամենամյա հաշվետվություն, օրենքով նախատեսված դեպքում նաև ֆինանսական հաշվետվությունների աուդիտի եզրակացություն,

3) օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշ-վառում,

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին,

5) ապահովել սույն կետում նշված հաշվետվություններին ծանոթանալու մատչելիությունը,

6) իր կայքում հրապարակել ընդունելությանն ու ուսումնառությանն առնչվող իր ներքին կանոնակարգերը, լիցենզիաների և հավատարմագրումների վերաբերյալ տեղեկությունները,

7) բացառել Հիմնադրի կողմից ԵՊՀ ԻՄ օգտագործմանը հանձնված գույքի, այդ թվում՝ շենքերի, շինությունների և հողատարածքների՝ առանց Հիմնադրի որոշման գրավադրումը, օտարումը կամ անհատույց օգտագործման հանձնումը,

8) իրականացնել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

7. ԵՊՀ ԻՄ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

18. ԵՊՀ ԻՄ-ը կառավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ԵՊՀ կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան: ԵՊՀ ԻՄ կառավարումը իրականացվում է միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ:

19. ԵՊՀ ԻՄ-ն իր գործունեությունն իրականացնում է իր մարմինների միջոցով:

20. ԵՊՀ ԻՄ կառավարման մարմիններն են՝

1) Գիտական խորհուրդը,

2) Տնօրենը,

որոնք իրենց իրավասությունների սահմաններում ընդունում են ինքնուրույն որոշումներ, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ԵՊՀ կանոնադրությանը և սույն կանոնադրությանը:

21. ԵՊՀ ԻՄ գիտական խորհուրդը ձևավորվում է սույն կանոնադրության և իր աշխատակարգի համաձայն: ԵՊՀ ԻՄ գիտական խորհուրդը ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական, գիտահետազոտական ու գիտատեխնիկական գործունեությունը պլանավորող, համակարգող և կարգավորող կոլեգիալ մարմին է:

22. ԵՊՀ ԻՄ գիտական խորհուրդը գործում է մասնաճյուղի Տնօրենի նախագահությամբ: ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է: ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նիստերը գումարվում են ուսումնական տարվա ընթացքում առնվազն 8 անգամ:

23. Գիտական խորհուրդը՝

1) հաստատում է իր աշխատակարգը,

2) Տնօրենի ներկայացմամբ՝ ԵՊՀ ռեկտորին ներկայացնում է առաջարկություն կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմակերպելու, լուծարելու վերաբերյալ,

3) հատկացված ընդհանուր չափաքանակների շրջանակներում քննարկում և ընդունում է որոշումներ ԵՊՀ ԻՄ՝ ըստ կրթական ծրագրերի և մասնագիտությունների ընդունելության վերաբերյալ,

4) հաստատում է ԵՊՀ ԻՄ կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կանոնակարգերը և ներքին իրավական ակտերը,

5) հաստատում է ԵՊՀ ԻՄ էթիկայի կանոնագիրքը, ԵՊՀ ԻՄ ներքին կարգապահական կանոնները, ԵՊՀ ԻՄ կառուցվածքային ստորաբաժանումների հիմնական գործունեությունը, ինչպես նաև ուսումնական գործընթացը կանոնակարգող ներքին իրավական այլ ակտերը,

6) քննարկում և հաստատում է կրթական ծրագրերը, ըստ մասնագիտությունների՝ վճարաչափերը,

7) քննարկում է հետազոտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում է գիտական հաղորդումներ ԵՊՀ ԻՄ-ում կատարվող կարևորագույն հետազոտական և մեթոդական աշխատանքների արդյունքների մասին,

8) ընդունում է անվանական և այլ կրթաթոշակներ տալու, ԵՊՀ մեդալով պարգևատրելու համար թեկնածություններ ներկայացնելու մասին որոշումներ,

9) հաստատում է ֆակուլտետների դեկանների (այսուհետ՝ Դեկան), գիտահետազոտական կենտրոնների ղեկավարների, ամբիոնների վարիչների և պրոֆեսորադասախոսական համակազմի ընտրությունների ընթացակարգերը,

10) ընտրում է դեկաններ, բաց քվեարկությամբ հաստատում գիտահետազոտական կենտրոնների ղեկավարների, ամբիոնների վարիչների, պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների տեղակալման մրցույթների արդյունքները,

11) լսում է ֆակուլտետների դեկանների ամենամյա հաշվետվությունները, դրանց հիման վրա փակ, գաղտնի քվեարկությամբ գնահատում նրանց գործունեությունը: Քվեարկության արդյունքներով անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ Դեկանի գործունեությունը դրական գնահատականի չարժանանալու դեպքում որոշում է կայացնում նրանց անվստահություն հայտնելու և լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ,

12) ԵՊՀ ԻՄ գործունեության նպատակներին հակասող կամ սույն կանոնադրությամբ արգելված արարք կատարելու կամ ԵՊՀ ԻՄ էթիկայի կանոնագրքով, ներքին կարգապահական կանոններով, ԵՊՀ կոլեկտիվ պայմանագրով և ներքին իրավական այլ ակտերով ամրագրված պահանջների կոպիտ կամ պարբերական խախտման դեպքում Տնօրենի կամ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի անդամների 1/3-ի առաջարկությամբ փակ, գաղտնի քվեարկությամբ և անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ որոշում է կայացնում Դեկանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ,

13) հաստատում է Դեկանի կատարողականի արդյունքային ցուցանիշները և անվստահություն հայտնելու հիմքերը,

14) ԵՊՀ ԻՄ գործունեության բնագավառներին, նպատակներին և խնդիրներին հա-մապատասխան՝ Հիմնադրին է ներկայացնում առաջարկություններ ԵՊՀ ԻՄ գործունեության հիմնական ուղղությունների, այդ թվում՝ նոր մասնագիտություններով կրթական ծրագրեր իրականացնելու վերաբերյալ,

15) Տնօրենին ներկայացնում է առաջարկություններ ԵՊՀ ԻՄ եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի նախագծի վերաբերյալ,

16) քննարկում է հանրապետության հասարակական, քաղաքական, կրթական, գիտական և մշակութային կյանքին ու կարևորագույն իրադարձություններին վերաբերող խնդիրներ,

17) քննարկում և հրատարակության է երաշխավորում մենագրություններ, ուսումնական ձեռնարկներ, ժողովածուներ և այլ նյութեր,

18) ըստ անհրաժեշտության՝ ստեղծում է Գիտական խորհրդին կից գործող մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ, սահմանում դրանց ձևավորման և գործունեության կարգը,

19) լսում է ԵՊՀ ԻՄ Տնօրենի ամենամյա հաշվետվությունը,

20) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից և սույն կանո-նադրությունից բխող այլ լիազորություններ:

24. ԵՊՀ ԻՄ գիտական խորհուրդը կազմված է ի պաշտոնե, հրավիրյալ և ընտրովի անդամներից: ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի ի պաշտոնե և հրավիրյալ անդամների թիվը չի կարող գերազանցել դրա կազմի 50 տոկոսը: ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի ընտրովի անդամների թեկնածությունները համամասնորեն առաջադրում են մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումները, որոնց թիվը հաշվարկվում է՝ ըստ տվյալ ստորաբաժանման հաստիքների գումարային թվի:

25. Գիտական խորհրդի անդամների ընդհանուր թիվը չի կարող գերազանցել 35-ը, որի առնվազն 50 տոկոսն ընտրովի անդամներն են: Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են մասնաճյուղի Տնօրենը (Գիտական խորհրդի նախագահ), փոխտնօրենը, գիտական քարտուղարը (Գիտական խորհրդի քարտուղար), ֆակուլտետների դեկանները,

ԵՊՀ ԻՄ Տնօրենի նշանակմամբ ԵՊՀ ԻՄ աշխատակիցներ, ինչպես նաև ընտրովի անդամներ՝ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի աշխատակարգին համապատասխան:

26. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի անդամների թվի 25 տոկոսը սովորողներն են, որոնց առաջադրում են ֆակուլտետային ուսանողական խորհուրդները, իսկ ընտրությունն իրականացնում է ԵՊՀ ԻՄ ուսանողական խորհուրդը:

27. Գիտական խորհրդի նիստը համարվում է իրավազոր, եթե ներկա են անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե որոշում չի ընդունվում փակ, գաղտնի քվեարկության մասին: Գիտական խորհրդի նիստերը կարող են անցկացվել առկա, հեռավար կամ համակցված (առկա և հեռավար ձևերի զուգակցմամբ) եղանակով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման միջոցով:

28. Գիտական խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել Գիտական խորհրդի նախագահի առաջարկով, ինչպես նաև Գիտական խորհրդի անդամների 1/3-ի պահանջով: Գիտական խորհրդի նախագահն արտահերթ նիստ հրավիրելու վերաբերյալ պահանջն ստանալուց հետո 10-օրյա ժամկետում պարտավոր է ապահովել նիստի գումարումը:

29. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նիստերն արձանագրվում են:

30. ԵՊՀ ԻՄ ընթացիկ գործունեությունը ղեկավարում է Տնօրենը: Տնօրենն իր իրավասության սահմաններում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն ու սույն կանոնադրությանը համապատասխան պատասխանատվություն է կրում ԵՊՀ ԻՄ գործունեության և արդյունքների համար: Տնօրենը կազմակերպում է Գիտական խորհրդի որոշումների կատարումը:

31. Տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և նրա հետ կնքված աշխատանքային պայմանագրով:

32. ԵՊՀ ԻՄ Տնօրենը՝

1) ղեկավարում է ԵՊՀ ԻՄ կրթական, գիտական, արտադրական, տնտեսական, ֆինանսական, միջազգային և այլ գործունեությունը,

2) կազմակերպում է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի, կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքները՝ ապահովելով դրանց ներդաշնակ գործունեությունը,

3) հրավիրում է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի, տնօրենության նիստերը,

4) տարեկան հաշվետվություն է ներկայացնում ԵՊՀ գիտական խորհրդին,

5) ԵՊՀ ռեկտորին առաջարկություն է ներկայացնում ԵՊՀ ԻՄ կանոնադրության կամ դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ,

6) ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում ԵՊՀ ռազմավարական ծրագրից բխող ԵՊՀ ԻՄ ռազմավարական ծրագիրը,

7) ԵՊՀ ռեկտորին առաջարկություն է ներկայացնում ԵՊՀ ԻՄ եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի, կառուցվածքի և հաստիքացուցակի վերաբերյալ,

8) ապահովում է ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի, ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ գիտական խորհուրդների որոշումների կատարումը,

9) ԵՊՀ ռեկտորին առաջարկություն է ներկայացնում կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմակերպելու կամ լուծարելու վերաբերյալ,

10) ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում կառուցվածքային

ստորաբաժանումների՝ ֆակուլտետների, գիտահետազոտական կենտրոնների, ամբիոնների ու այլ ստորաբաժանումների կանոնակարգերը, ընթացակարգերը, ԵՊՀ ԻՄ ներքին կարգապահական կանոնները, ԵՊՀ ԻՄ էթիկայի կանոնագիրքը և ներքին իրավական այլ ակտեր,

11) սույն կանոնադրությանը համապատասխան՝ կազմավորում է ԵՊՀ ԻՄ գիտական խորհուրդը և կառուցվածքային ստորաբաժանումների կոլեգիալ կառավարման մարմինները, սահմանում է աշխատողների լիազորությունները, պաշտոնական պարտականությունները,

12) արձակում է սովորողների ընդունելության, հեռացման, վերականգնման, համապատասխան արձակուրդ ձևակերպելու, խրախուսման միջոցներ և կարգապահական տույժեր կիրառելու, որակավորման աստիճան շնորհելու, ուսանողական նպաստ հատկացնելու և ԵՊՀ ԻՄ գործունեությանը վերաբերող այլ հրամաններ,

13) ԵՊՀ ռեկտորի համաձայնությամբ աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում փոխտնօրեններին, որոշում նրանց գործունեության ոլորտները և իրավասությունը,

14) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում վարչական ստորաբաժանումների ղեկավարներին, որոշում նրանց գործունեության ոլորտները և իրավասությունները,

15) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և կարգապահական տույժեր, կազմակերպում է աշխատողների ատեստավորումը, շարունակական վերապատրաստումը,

16) աշխատանքային պայմանագրեր է կնքում ընտրված դեկանների, գիտահետազոտական կենտրոնների ղեկավարների, ամբիոնների վարիչների և պրոֆեսորադասախոսական համակազմի աշխատողների հետ,

17) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով դեկանների, գիտահետազոտական կենտրոնների ղեկավարների, ամբիոնների վարիչների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում լուծում է կնքված աշխատանքային պայմանագրերը: Դեկանի, գիտահետազոտական կենտրոնի ղեկավարի, ամբիոնի վարիչի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում ԵՊՀ ԻՄ տնօրենն իրավունք ունի այդ պաշտոնում մինչև վեց ամիս ժամկետով հրամանագրել անձի, որն ունի կառուցվածքային ստորաբաժանման ուղղությանը համապատասխան գիտական աստիճան,

18) կնքում է մինչև տասը միլիոն դրամի կամ դրան համարժեք արտարժույթի չափով պայմանագրեր: Նշված սահմանաչափը գերազանցող պայմանագրերը ենթակա են հաստատման՝ ԵՊՀ ռեկտորի կողմից,

19) կասեցնում է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների այն որոշումները, որոնք չեն բխում նրանց իրավասությունից, հակասում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն ու սույն կանոնադրությանը, և նշանակում է դրանց վերաքննարկում,

20) իր բացակայության ժամանակ Տնօրենի պարտականությունների կատարումը հանձնարարում է փոխտնօրեններից մեկին,

21) տալիս է ԵՊՀ ԻՄ անունից հանդես գալու լիազորագրեր, բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

22) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և ԵՊՀ կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

33. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն կարող է ընտրվել այն անձը, որն ունի գիտական

աստիճան: Նույն անձը չի կարող ավելի քան 2 անգամ անընդմեջ ընտրվել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնում: ԵՊՀ ԻՄ տնօրենը ընտրվում է ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի կողմից: Ընտրության արդյունքների հիման վրա ԵՊՀ ռեկտորը պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում ԵՊՀ ԻՄ տնօրենին:

34. Փոխտնօրենները նշանակվում են Տնօրենի հրամանով և իրականացնում են ԵՊՀ ԻՄ գործունեության որոշակի ոլորտի անմիջական ղեկավարում՝ Տնօրենի հանձնարարություններին, հրամաններին և կարգադրություններին համապատասխան:

35. ԵՊՀ ԻՄ տնօրենությունը Տնօրենին կից խորհրդակցական մարմին է, որը ձևավորվում է ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով: ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում տնօրենությունը քննարկում է ԵՊՀ ԻՄ գործունեության ոլորտներին վերաբերող հարցեր: Տնօրենության անվանական կազմը հաստատում է ԵՊՀ ԻՄ տնօրենը:

8. ԵՊՀ ԻՄ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

36. ԵՊՀ ԻՄ կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարել, ձեռնարկատիրական գործունեության նոր տեսակներ կարող է սահմանել ԵՊՀ ԻՄ հիմնադիրը՝ ԵՊՀ կանոնադրությամբ սահմանված կարգով:

9. ԵՊՀ ԻՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

37. ԵՊՀ ԻՄ-ը Հիմնադրի համաձայնությամբ պլանավորում է իր գործունեությունը, մշակում զարգացման հեռանկարները և ընդունում իր գործունեության վերաբերյալ որոշումներ:

38. ԵՊՀ ԻՄ սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ ԵՊՀ ԻՄ մարմինների անդամների՝ բացառությամբ աշխատողների աշխատավարձի և պարտականությունների կատարմամբ պայմանավորված փոխհատուցման ենթակա ծախսերի:

39. Իր կանոնադրական գործունեությունն իրականացնելիս ԵՊՀ ԻՄ-ն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ ընդունելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը չհակասող ցանկացած որոշում:

40. ԵՊՀ ԻՄ-ը ձեռնարկատիրական գործունեություն իրականացնում է միայն այն դեպքերում, երբ դա համապատասխանում է իր կանոնադրությանը կամ ծառայում է իր կանոնադրական նպատակների իրականացմանը: ԵՊՀ ԻՄ կողմից իրականացվող (այդ թվում անձամբ) ձեռնարկատիրական գործունեության տեսակները սահմանվում են սույն կանոնադրությամբ:

10. ԵՊՀ ԻՄ-ՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

41. Սովորողների ընդունելությունը և ուսուցման մեկ մակարդակից մյուսին անցումը կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և իրավական այլ ակտերին համապատասխան:

42. ԵՊՀ ԻՄ-ում բարձրագույն կրթությունն իրականացվում է բակալավրի և մագիստրոսի հիմնական կրթական ծրագրերով, պետական կրթական պահանջներին համապատասխան: ԵՊՀ ԻՄ-ը կարող է իրականացնել նաև հանրակրթական, միջին մասնագիտական, ինչպես նաև լրացուցիչ կրթական ծրագրեր:

43. Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վճարովի

հիմունքներով ուսուցումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ և Հիմնադրի սահմանած կարգերով:

44. ԵՊՀ ԻՄ-ում կիրառվում է բարձրագույն կրթության աստիճանական համակարգ: Ուսուցման յուրաքանչյուր աստիճանի շրջանավարտին տրվում է համապատասխան որակավորում և ավարտական վկայական (դիպլոմ):

45. Լրացուցիչ մասնագիտական կրթական ծրագիրն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած անձանց տրվում է ԵՊՀ կողմից սահմանված նմուշի ավարտական փաստաթուղթ (վկայագիր, հավաստագիր):

46. ԵՊՀ ԻՄ-ում ուսուցումը կարող է իրականացվել առկա, հեռակա, դրսեկության և հեռավար ձևերով: Թույլատրելի է բարձրագույն կրթություն ստանալու տարբեր ձևերի զուգակցումը:

47. ԵՊՀ ԻՄ-ում գործում է կրթական ծրագրերի ղեկավարների ինստիտուտը: Ուսումնական գործընթացի կազմակերպման մեջ ծրագրերի ղեկավարների համար սահմանված իրավասությունները և պարտականությունները կարող են ընդլայնվել Հիմնադրի համաձայնությամբ:

48. ԵՊՀ ԻՄ հիմնական կրթական ծրագրերով ուսումնառությունն իրականացվում է կրեդիտների կուտակման և փոխանցման համաեվրոպական համակարգի դրույթներին և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

49. ԵՊՀ ԻՄ-ում գործում է սովորողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգ:

50. ԵՊՀ ԻՄ-ում գործում է որակի ներքին ապահովման և վերահսկման համակարգ, որի նպատակը կրթության որակի շարունակական բարելավումն է:

51. ԵՊՀ ԻՄ-ում իրականացվող գիտահետազոտական աշխատանքներին կարող են մասնակցել ԵՊՀ ԻՄ աշխատողները և սովորողները, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով հրավիրված այլ մասնագետներ:

52. ԵՊՀ ԻՄ-ը կազմակերպում և անցկացնում է գիտաժողովներ, համաժողովներ, խորհրդակցություններ, սեմինարներ, հրատարակում է գիտական պարբերականներ, ժողովածուներ, մենագրություններ, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ:

53. ԵՊՀ ԻՄ կրթական և գիտական գործունեությունը ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից.

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից,
2) ԵՊՀ ԻՄ հիմնադրի կողմից,
3) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա հիմնարկների, կազմակերպությունների ու ֆիզիկական անձանց նվիրատվություններից, դրամաշնորհներից,
4) ԵՊՀ ԻՄ վճարովի ծառայություններից ստացվող միջոցներից,
5) բարեգործական նպատակով տրամադրվող միջոցներից,
6) նախաձեռնողական հետազոտությունների համար նախատեսված միջոցներից,
7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

54. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով իրականացվող գիտահետազոտական, նախագծային, կոնստրուկտորական, փորձարարական և այլ աշխատանքների պլանավորումը, ֆինանսավորումը, հաշվետվությունն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

11. ԵՊՀ ԻՄ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

55. ԵՊՀ ԻՄ կառուցվածքային ստորաբաժանումներն են վարչական, ակադեմիական (ուսումնական, գիտական, հետազոտական) և օժանդակ ստորաբաժանումները:

56. Ֆակուլտետը ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանում է, որն իրականացնում է բարձրագույն կրթության մեկ կամ մի քանի մասնագիտություն (կրթական ծրագիր(եր)) և գիտահետազոտական ուսումնասիրություններ:

57. Ֆակուլտետի կառավարման մարմիններն են Գիտական խորհուրդը և ֆակուլտետի դեկանը:

58. Ֆակուլտետի կառավարման կոլեգիալ մարմինը ֆակուլտետի գիտական խորհուրդն է, որի իրավասությունները, կազմը, ձևավորման ու գործունեության կարգը սահմանվում են ֆակուլտետի օրինակելի կանոնակարգով և ֆակուլտետի կանոնակարգով:

59. Ֆակուլտետի ընթացիկ գործունեության կառավարումն ու համակարգումն իրականացնում է Դեկանը: Դեկան կարող է ընտրվել ֆակուլտետի ուղղությանը համապատասխան գիտական աստիճան և կոչում ունեցող անձը:

60. Դեկանն ընտրվում է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդում փակ, գաղտնի քվեարկությամբ 5 տարի ժամկետով: Դեկանի պաշտոնում ընտրված է համարվում այն թեկնածուն, որը ստացել է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի ձայների ընդհանուր թվի մեծամասնությունը: Ընտրված Դեկանին պաշտոնի է նշանակում մասնաճյուղի Տնօրենը և սահմանված կարգով կնքում է պայմանագիր՝ 5 տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Դեկանի պաշտոնում:

61. Դեկանի ընտրության կազմակերպման և իրականացման կարգի մանրամասները սահմանվում են ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի կողմից:

62. Ամբիոնները և գիտահետազոտական կենտրոնները ԵՊՀ ԻՄ կառուցվածքային ստորաբաժանումներ են, որոնց իրավասությունները, ձևավորման և գործունեության կարգը, կազմը սահմանվում են օրինակելի կանոնակարգերով և իրենց կանոնակարգերով:

63. ԵՊՀ ԻՄ ամբիոնները կարող են լինել համամասնաճյուղային:

64. Ամբիոնները և գիտահետազոտական կենտրոնները ղեկավարվում են կոլեգիալ ու միանձնյա կառավարումների զուգակցմամբ:

65. Ամբիոնը ղեկավարում է վարիչը, որն ընտրվում է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի կողմից սահմանված կարգով՝ ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգով, բաց մրցույթի հիման վրա՝ փակ, գաղտնի քվեարկությամբ և 5 տարի ժամկետով ֆակուլտետի գիտական խորհրդում: Ընտրությունների արդյունքների հիման վրա ամբիոնի վարիչին պաշտոնի է նշանակում Տնօրենը: Ամբիոնի վարիչի գործունեությունը համարվում է գիտամանկավարժական աշխատանք: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել ամբիոնի վարիչի պաշտոնում:

66. Գիտահետազոտական կենտրոնի ղեկավարն ընտրվում է ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի կողմից սահմանված կարգով՝ գիտահետազոտական կենտրոնի ղեկավարի ընտրության ընթացակարգով, բաց մրցույթի հիման վրա՝ փակ, գաղտնի քվեարկությամբ և 5 տարի ժամկետով ֆակուլտետի գիտական խորհրդում: Ընտրությունների արդյունքների հիման վրա գիտահետազոտական կենտրոնի ղեկավարին պաշտոնի է նշանակում Տնօրենը: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել գիտահետազոտական կենտրոնի ղեկավարի պաշտոնում:

67. ԵՊՀ ԻՄ-ում Հիմնադրի համաձայնությամբ կարող են փորձարկվել և իրականացվել

կրթական ծրագրերի կառավարման ամբիոնային ձևից տարբերվող այլ ձևեր:

12. ԵՊՀ ԻՄ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ

68. ԵՊՀ ԻՄ աշխատողները բաժանվում են պրոֆեսորադասախոսական (ամբիոնի վարիչ, կրթական ծրագրի ղեկավար, պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ և դասախոս), վարչական (Տնօրեն, փոխտնօրեններ, ԵՊՀ ԻՄ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ և այլն), ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական, արտադրական և այլ տարակարգերի:

69. ԵՊՀ ԻՄ աշխատողների և սովորողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, ԵՊՀ ԻՄ կոլեկտիվ պայմանագրով և այլ ներքին իրավական ակտերով:

70. ԵՊՀ ԻՄ աշխատողներն իրավունք ունեն՝

1) ընտրելու և ընտրվելու ԵՊՀ ԻՄ պաշտոններում և կառավարման մարմիններում, ընդգրկվելու և մասնակցելու ԵՊՀ ԻՄ համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ և կոլեկտիվ պայմանագրով սահմանված կարգով,

2) մասնակցելու ԵՊՀ ԻՄ գործունեությանն առնչվող բոլոր խնդիրների քննարկմանը,

3) ընտրելու ուսումնական գործընթացի դասավանդման մեթոդներ,

4) միավորվելու արհեստակցական կազմակերպություններում,

5) ԵՊՀ ԻՄ կանոնադրությանը և կոլեկտիվ պայմանագրին համապատասխան՝ օգտվելու գրադարանների, տեղեկատվական պահոցների, ուսումնական և գիտական ստորաբաժանումների, ինչպես նաև սոցիալ-կենցաղային, բուժական ստորաբաժանումների, ուսումնաարտադրական բազաների, մարզաառողջարանային ճամբարի և այլ կառուցվածքային ստորաբաժանումների վճարովի և անվճար ծառայություններից՝ ԵՊՀ ԻՄ կանոնադրությանը և կոլեկտիվ պայմանագրին համապատասխան,

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկելու ԵՊՀ ԻՄ կառավարման մարմինների և համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների կողմից ընդունված ակտերը,

7) նախատեսված ժամկետում և սահմանված չափով ստանալու աշխատավարձ, լրավճարներ, հավելավճարներ, ինչպես նաև պարգևատրումներ և խրախուսումներ (ներառյալ՝ դրամական) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և ԵՊՀ ԻՄ կոլեկտիվ պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով,

8) մասնագիտական ու աշխատանքային գործունեության համար ունենալ կազմակերպական և նյութատեխնիկական պայմաններ,

9) ըստ նախասիրությունների՝ կազմակերպելու և մասնակցելու ԵՊՀ ԻՄ-ում անցկացվող գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին և գիտաժողովներին,

10) ԵՊՀ ԻՄ աշխատողներն ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ,

71. ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական կազմը, գիտաշխատողները և սովորողներն օժտված են ակադեմիական ազատություններով:

72. ԵՊՀ ԻՄ-ում պրոֆեսորադասախոսական կազմի, գիտական աշխատողների բոլոր թափուր պաշտոններն զբաղեցվում են համաձայն սույն կանոնադրության և ակադեմիական պաշտոնների տեղակալման կարգի:

73. ԵՊՀ ԻՄ աշխատողները պարտավոր են՝

1) պահպանել և կատարել սույն կանոնադրության, ԵՊՀ ԻՄ ներքին կարգապահական կանոնների, էթիկայի կանոնագրքի և ներքին իրավական այլ ակտերի պահանջները,

2) պահպանել աշխատաժամանակի ռեժիմը, արդյունավետ և աշխատանքային նկարագրին համապատասխան օգտագործել աշխատանքային ժամերը,

3) կատարել ԵՊՀ ԻՄ ղեկավար մարմինների օրինական որոշումները,

4) ապահովել ուսումնական գործընթացի, անցկացվող գիտական հետազոտությունների արդյունավետությունը,

5) պահպանել և արդյունավետ ու խնայողաբար օգտագործել ԵՊՀ ԻՄ գույքը,

6) պարբերաբար բարձրացնել իրենց մասնագիտական որակավորումը, անցնել վերապատրաստում կամ որակավորման բարձրացում ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետում,

7) կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ, էթիկայի կանոնագրքով, ներքին կարգապահական կանոններով և ներքին իրավական այլ ակտերով նախատեսված պարտականությունները:

74. ԵՊՀ ԻՄ սովորողներն իրավունք ունեն՝

1) սեփական հայեցողությամբ, ըստ հակումների և պահանջմունքների՝ ընտրելու մասնագիտություն, ուսուցման ձև, զբաղվելու հետազոտություններով, ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու բարձրագույն կրթությունը,

2) ստանալու գիտության, տեխնիկայի և մշակույթի ժամանակակից մակարդակին համապատասխանող գիտելիքներ, հաճախելու ԵՊՀ ԻՄ-ում կարդացվող դասախոսություններին,

3) մասնակցելու իրենց կրթության բովանդակության ձևավորմանը (ուսումնական դասընթացների և մասնագիտացման ընտրությանը)՝ պահպանելով բարձրագույն կրթության պետական կրթական պահանջները,

4) մասնակցելու ուսուցման որակն ապահովող գործառույթներին և գնահատելու պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը,

5) բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից՝ յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է ԵՊՀ ԻՄ-ում՝ ըստ սահմանված կարգի,

6) ընտրել բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերի տարբեր ձևերով ուսուցմումը՝ առկա (ստացիոնար), հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկություն (էքստեռնատ),

7) հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղելու երկրորդ մասնագիտական (զուգահեռ) ուսուցման հետ և ստանալու երկրորդ որակավորման աստիճան,

8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով սահմանված կարգով ընդգրկվելու և մասնակցելու ԵՊՀ ԻՄ կառավարման մարմինների աշխատանքներին,

9) օգտվելու ԵՊՀ ԻՄ գրադարանից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական, մարզական, առողջարանային, ուսումնաարտադրական և այլ ստորաբաժանումների ծառայություններից,

10) ըստ նախասիրությունների՝ մասնակցելու ԵՊՀ ԻՄ-ում անցկացվող ուսանողական գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին և գիտաժողովներին,

11) միավորվելու ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերու-

թյուններում և ուսանողական այլ կազմակերպություններում,

12) բողոքարկելու ԵՊՀ ԻՄ ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

13) օգտվելու ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի կամ լրիվ փոխհատուցման իրավունքից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

14) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ԵՊՀ ԻՄ կողմից սահմանված կարգով ստանալու սահմանված չափի (ներառյալ՝ անվանական) կրթաթոշակ,

15) ծանոթանալու ԵՊՀ ԻՄ կանոնադրությանը և իրավական այլ փաստաթղթերի,

16) կրթության ոլորտի կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով, անհրաժեշտության դեպքում, ստանալու ակադեմիական արձակուրդ՝ մինչև մեկ տարի ժամկետով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի,

17) ուսուցման առկա ձևով ուսումնառության դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում առնվազն երկու անգամ գտնվելու արձակուրդում՝ առնվազն յոթ շաբաթ ընդհանուր տևողությամբ,

18) հանրակացարանի առկայության և բնակելի տարածքի կարիք ունենալու դեպքերում՝ ԵՊՀ ԻՄ սահմանած կարգով հանրակացարանում ստանալու համապատասխան տեղ,

19) սահմանված կարգով փոխադրվելու մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատություն՝ ներառյալ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունները,

20) ուսման բարձր առաջադիմության, հասարակական ակտիվության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալու բարոյական և (կամ) նյութական խրախուսանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և ԵՊՀ ԻՄ սահմանած կարգով:

75. ԵՊՀ ԻՄ սովորողներն ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

76. Կրթությունն ընդհատած նախկին սովորողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի վերականգնվելու ԵՊՀ ԻՄ-ում:

77. Արգելվում է սովորողներին արտաուսումնական աշխատանքում ներգրավելը՝ առանց նրանց և (կամ) նրանց օրինական ներկայացուցիչների համաձայնության:

78. ԵՊՀ ԻՄ սովորողները պարտավոր են՝

1) սահմանված ժամկետներում կատարել բոլոր ուսումնական առաջադրանքները,

2) տիրապետել բարձր որակավորում ունեցող ապագա մասնագետի համար անհրաժեշտ գիտելիքներին, հմտություններին և կարողություններին,

3) ցուցաբերել ակադեմիական ազնվություն և խուսափել գրագողությունից,

4) անշեղորեն կատարել սույն կանոնադրության, ԵՊՀ ԻՄ ներքին կարգապահական կանոնների և ներքին իրավական ակտերի պահանջները,

5) հաճախել ուսումնական ծրագրերով նախատեսված դասընթացներին,

6) հոգատար վերաբերվել ԵՊՀ ԻՄ գույքին,

7) պահպանել համակեցության, բարոյականության, սահմանված էթիկայի ու բարեվարքության նորմերը,

8) վճարովի հիմունքներով կրթություն ստացող սովորողները պարտավոր են ժամանակին

վճարել ուսման վարձավճարը. ուսման վարձավճարը ժամանակին չվճարելու դեպքում այդ սովորողները կարող են հեռացվել ԵՊՀ ԻՄ-ից,

9) կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով, էթիկայի կանոնագրքով ԵՊՀ ԻՄ ներքին իրավական այլ ակտերով և ուսումնառության պայմանների վերաբերյալ կնքված պայմանագրով նախատեսված պարտականություններ:

79. Այն սովորողները, ովքեր չեն կատարում սույն կանոնադրությամբ, էթիկայի կանոնագրքով, ներքին իրավական այլ ակտերով սահմանված պարտականությունները, ցուցաբերում են անբավարար ակադեմիական առաջադիմություն, խախտում են ԵՊՀ ԻՄ ներքին կարգապահական կանոնները, Տնօրենի կամ նրա կողմից լիազորված անձի հրամանով կարող են ենթարկվել կարգապահական տույժերի՝ ընդհուպ մինչև ԵՊՀ ԻՄ-ից հեռացում՝ ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով:

80. ԵՊՀ ԻՄ ուսանողական խորհուրդը ԵՊՀ ԻՄ-ում գործող ուսանողական կազմակերպություն է, որը սովորողների ինքնակառավարման, ընտրովի ներկայացուցչական մարմին է: Ուսանողական խորհրդի գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ և ուսանողական խորհրդի կանոնադրությամբ:

81. ԵՊՀ ԻՄ ուսանողական գիտական ընկերությունը ԵՊՀ ԻՄ-ում գործող ուսանողական կազմակերպություն է, որի նպատակը սովորողների գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը նպաստելն է: Ուսանողական գիտական ընկերության գործունեությունը կարգավորվում է ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության կանոնադրությամբ և ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի որոշումներով:

13. ԵՊՀ ԻՄ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

82. ԵՊՀ ԻՄ լուծարումը կատարվում է Հիմնադրի որոշմամբ: ԵՊՀ ԻՄ լուծարման դեպքում պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է ԵՊՀ բյուջե: